ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» Մարտի 2023 թ. N 24-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ ՓՈՂՈՑԻ N 48 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻՑ ԲՆԱԿԱՐԱՆ ԵՎ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂԻ ԳՆԵԼՈՒ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏԵՐԻ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1521-Ն որոշման 1.1-ին կետով հաստատված կարգի 10-րդ ու 13-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետը

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում Երևան քաղաքի Գրիբոյեդովի փողոցի N 48 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան և ավտոկայանատեղի գնելու ցանկություն ունեցող հանրային ծառայողների կողմից ներկայացվող դիմում-հայտի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել գերատեսչությունների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե ներկայացվող գերատեսչական տեղեկանքի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն հրամանի 1-ին կետում նշված դիմում-հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի ապրիլի 11-ը:

4. Սույն հրամանի 2-րդ կետում նշված գերատեսչական տեղեկանքների ներկայացման վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի ապրիլի 14-ը:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կայքում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

3/20/2023

X

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2023 թվականի մարտի 20 -ի N 24-Ա հրամանի

_____ գլխավոր քարտուղար (աշխատակազմի ղեկավար)
(գերատեսչության անվանումը)

պարոն/տիկին _____ - ին
(գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անուն, ազգանուն)

_____
(ծառայողի զբաղեցրած պաշտոնը)

_____ - ից
(դիմում-հայտ ներկայացնողի անուն, ազգանուն)

ԴԻՄՈՒՄ-ՀԱՅՏ

Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Գրիբոյեդովի փողոցի N 48 հասցեում կառուցվող բազմաբնակարան շենքային համալիրից բնակարան և ավտոկայանատեղի գնելու

Ծառայողի անունը, ազգանունը և հայրանունը	Ծառայողի ընտանիքի կազմը (ամուսին, երեխա, ծնող)	Ծառայողի անձնագրային տվյալները	Ծառայողին պատկանող բանկային հաշվեհամարը	Ծառայողի էլեկտրոնային հասցեն	Ծառայողի հեռախոսահամարը

Սույն դիմում-հայտին կից ներկայացնում եմ՝

1. ծառայողի և նրա ընտանիքի անդամների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ կազմված ____ էջից.
2. ամուսնության, ամուսնալուծության, հայրության ճանաչման վկայականների պատճենները՝ կազմված ____ էջից.

Սույն դիմում-հայտով հայտնում եմ իմ ցանկությունը՝ մասնակցելու Ծրագրի շրջանակներում բնակարանների ձեռքբերման գործընթացին, ծանոթացել եմ ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 1521-Ն որոշմամբ սահմանված պայմաններին և պահանջներին:

_____

(դիմում-հայտը ներկայացնելու ամսաթիվը)

_____

(դիմում-հայտը ներկայացնողի անուն, ազգանունը)

_____

(դիմում-հայտը ներկայացնողի ստորագրություն)

Հավելված N 2
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի
2023 թվականի մարտի 20-ի N 24-Ա հրամանի

ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

_____
(Գերատեսչության անվանումը)

Հանրային ծառայողներին բնակարաններով ապահովման ծրագրի երկրորդ փուլի շրջանակներում բնակարան և ավտոկայանատեղի գնելու պայմաններին բավարարող դիմումատուների վերաբերյալ

Աղյուսակ 1:

Դիմումատուի հերթական համարը	Դիմումատուի անունը, ազգանունը և հայրանունը	Դիմումատուի ընտանիքի կազմը	Դիմումատուի պաշտոնը	Դիմումատուի աշխատանքի գտնվելու վայրը	Դիմումատուի անձնագրային տվյալները	Դիմումատուին պատկանող բանկային հաշվեհամարը	Դիմումատուի էլեկտրոնային հասցեն	Դիմումատուի հեռախոսահամարը

Սույն տեղեկանքին կից ներկայացվում են դիմումատուների դիմում-հայտերը:

_____
(տեղեկանքը կազմելու ամսաթիվը)

_____
(Գերատեսչության գլխավոր քարտուղարի (աշխատակազմի ղեկավարի) անունը, ազգանունը, ստորագրությունը)

Կ.Տ.

Դիմում-հայտի լրացման ուղեցույց

Դիմում–հայտը լրացվում է էլեկտրոնային տարբերակով (ոչ ձեռագիր)

1. «Ծառայողի անունը, ազգանունը և հայրանունը» սյունակում լրացվում է Ծրագրի շրջանակներում բնակարան գնելու ցանկություն ունեցող անձի անունը, ազգանունը և հայրանունը

2. «Ծառայողի ընտանիքի կազմը» սյունակում լրացվում է ծառայողի ամուսնու, երեխաների և ծնողների անունը, ազգանունը, հայրանունը և ազգակցական կապը:

3. «Ծառայողի պաշտոնը» տողում լրացվում է դիմում-հայտ ներկայացնելու պահին Ծառայողի զբաղեցրած պաշտոնը:

4. Գերատեսչական տեղեկանքում «Ծառայողի աշխատանքի գտնվելու վայրը» սյունակում լրացվում է՝ դիմում-հայտը ներկայացնելու պահին Ծառայողի աշխատանքի գտնվելու վայրի հասցեն:

5. «Ծառայողի անձնագրային տվյալներ» սյունակում լրացվում է Ծառայողի անձնագրի սերիան (նույնականացման քարտի համարը), ում կողմից և երբ է տրվել:

6. «Ծառայողին պատկանող բանկային հաշվեհամարը» սյունակում լրացվում է Ծառայողի անվամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված որևէ բանկում բացված բանկային հաշվեհամարի տվյալները՝ վիճակահանության արդյունքներով վերջինիս ոչ մի բնակարանի ստացման իրավունք չվերապահվելու արդյունքում վերջինիս կողմից վճարված 400,000 ՀՀ դրամ գումարը հետ վերադարձնելու նպատակով:

7. «Էլեկտրոնային հասցե» սյունակում լրացվում է Ծառայողի էլեկտրոնային փոստի հասցեն: Ծրագրի շրջանակներում ծանուցումներն իրականացվելու են ծառայողի կողմից նշվող էլեկտրոնային հասցեի միջոցով, որոնք համարվելու են պատշաճ ծանուցում:

8. «Հեռախոսահամար» սյունակում լրացվում են Ծառայողի աշխատանքային և անձնական հեռախոսահամարները (բջջային և քաղաքային):